



## **Բնակության և հանրային վայրերում ուղեկցող և զգացական աջակցության կենդանիներ ունենալու իրավունքները. ՀՏՀ**

---

*Հրապ. #7155.10 Armenian - հունիս, 2020թ.*

Եթե ունեք հաշմանդամություն, անօթևան եք և պահում եք ուղեկցող կենդանի, օրենքը թույլատրում է, որ այդ կենդանին ձեզ հետ լինի ինչպես հանրային վայրերում, այնպես էլ ձեր բնակության վայրում՝ ներառյալ անօթևանների կացարանները:

Եթե ուղեկցող կենդանու փոխարեն ունեք զգացական աջակցության կենդանի, կան նաև օրենքներ, որոնք թույլ են տալիս, որ այդ կենդանին ձեզ հետ լինի ձեր բնակության վայրում, այդ թվում՝ անօթևանների կացարաններում, սակայն՝ ոչ հանրային վայրերում:

Հարցուպատասխանի այս թերթիկի միջոցով ծանոթացեք ձեզ համար կիրառելի կանոններին և գործող բացառություններին:

Արագ ծանոթության համար տե՛ս նաև «Զգացական աջակցության և ուղեկցող կենդանիները հանրային և բնակության վայրերում. համառոտ տեղեկագիրը»:

### **Ո՞րոնք են կիրառելի օրենքները**

ՆՇՈԻՄ. այս բաժինը նպատակ ունի համառոտ ներկայացնելու այն օրենքները, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին հանրային և բնակության վայրերում: Հաջորդ բաժինները, սկսած «Ո՞րն է համարվում ուղեկցող կենդանի» բաժնից, ներկայացնում են հատուկ հարցեր և պատասխաններ այն թեմայի շուրջ, թե արդյոք ուղեկցող կամ զգացական աջակցության կենդանիներին կարելի է բերել հանրային և (կամ) բնակության վայրեր:

Կան օրենքների տարբեր ժողովածուներ, որոնք սահմանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները հանրային և բնակության վայրերում: Որոշները նահանգային օրենքներ են, մյուսները՝ դաշնային:

Ստորև այն հիմնական օրենքներն են, որոնք վերաբերում են հանրային վայրերում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին.

- Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի (անգլ. The Americans with Disabilities Act, ADA) Հատված II (վերաբերում է նահանգային և տեղական պետական կազմակերպություններին, AKA հանրային կազմակերպություններին) և [Դաշնային օրենքի] Հատված III (վերաբերում է մասնավոր ընկերություններին)
- Կալիֆորնիայի քաղաքացիական իրավունքների մասին Ունրուկի օրենք (վերաբերում է մասնավոր ընկերություններին)
- Կալիֆորնիայի հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենք (վերաբերում է մասնավոր ընկերություններին)
- Կալիֆորնիա նահանգի օրենսգիրք 11135 (վերաբերում է նահանգային ֆինանսավորում ստացող կազմակերպություններին)

Ստորև այն հիմնական օրենքներն են, որոնք սահմանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները բնակության վայրում.

- Առանց խտրականության կացարանով ապահովման պայմաններում փոփոխությունների մասին օրենք [դաշնային օրենք] (վերաբերում է բնակության վայրերի տեսակներից մեծ մասին, այդ թվում՝ անօթևանների կացարաններին)
- Աշխատունակության վերականգնման մասին օրենքի Բաժին 504 (վերաբերում է դաշնային ֆինանսավորում ստացող կազմակերպություններին) [դաշնային օրենք]
- Կալիֆորնիայի հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենք
- Կալիֆորնիայի Աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականության արգելման մասին օրենք

ՆՇՈՒՄ. անօթևանների կացարաններում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները կարող են ներառված լինել թե՛ դաշնային, թե՛ նահանգային օրենքների տարբեր ժողովածուներում. կախված է այն բանից, թե ինչ ձևով է ֆինանսավորվում կացարանը, կացարանի որ ասպեկտն է օգտագործվում, կամ ինչպես են այն օգտագործում (որպես ցերեկային զբաղմունքի/ռեսուրսային կենտրոն, թե որպես բնակության վայր): Ինչևէ, ամեն դեպքում կարող եք օգտվել այս ՅՏԳ-ից՝ գնահատելու, թե որ կանոններն են կիրառելի ձեզ համար և երբ և ինչպես կիրառել դրանք:

### **Ո՞ւմ է պաշտպանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենքը**

Հաշմանդամություն ունեցող անձինք պաշտպանվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենքով: Դաշնային և նահանգային օրենքներում հաշմանդամությունները սահմանվում են որոշ տարբերություններով, սակայն հիմնականում դրանք հետևյալն են.

1. ֆիզիկական կամ մտավոր անկարողություն
2. որը սահմանափակում է
3. անձի մեկ կամ մի քանի կարևոր կենսական գործողությունը (անգլ. major life activities, MLA)

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին դաշնային օրենքներում և Կալիֆորնիայի օրենքներում գործածվում է նույնանման սահմանում այն բացառությամբ, որ Կալիֆորնիայի օրենքն ավելի լայն է սահմանում. դաշնային օրենքով պահանջվում է, որ MLA-ի սահմանափակումը լինի «Էական»:

Անհատները պաշտպանված են հաշմանդամության հիմքով խտրականությունից, եթե նրանք.

1. ունեն ֆիզիկական կամ մտավոր անկարողություն, որը [Էականորեն, եթե կիրառվում է դաշնային օրենքը] սահմանափակում է մեկ կամ մի քանի կարևոր կենսական գործողություն,
2. ունեն նման անկարողության գրանցված պատմություն կամ
3. դիտվում են որպես նման անկարողություն ունեցող:

## **Ի՞նչն է համարվում կարևոր կենսական գործողություն (MLA)**

Ինչպես հաշմանդամության սահմանումը, կարևոր կենսական գործողությունների սահմանումները նույնպես թեթևակի տարբերվում են դաշնային և նահանգային օրենքներում: Ինչևէ, դրանք ընդհանուր առմամբ ներառում են հետևյալը՝ առանց սահմանափակման. մեկին ինսամելը, ուտելը, քնելը, տեսնելը, լսելը, խոսելը, կենտրոնանալը, մտածելը, աշխատելը, քայլելը, կանգնելը, շնչելը և մարմնի կարևոր ֆունկցիաները, ինչպիսիք են մարսողական, շնչառական, նյարդաբանական, արյան շրջանառության և վերականգնողական ֆունկցիաները:

Ինչպես հաշմանդամության սահմանման դեպքում, MLA-ի սահմանումը նահանգային օրենքում նույնպես մի փոքր ավելի լայն է և լրացուցիչ նկարագրում է MLA-ը որպես սահմանափակ, եթե այն դժվարացել է ֆիզիկական կամ մտավոր անկարողության հետևանքով:

## **Ո՞րն է համարվում ուղեկցող կենդանի**

«Ուղեկցող կենդանի» է.

1. շունը,
2. որն անհատականորեն վարժեցվել է
3. այնպիսի աշխատանք կամ առաջադրանքներ կատարելու համար,
4. որոնք կօգնեն հաշմանդամություն, այդ թվում՝ ֆիզիկական, զգայական ընկալման, հոգեկան առողջության, մտավոր կամ այլ տեսակի հաշմանդամություն ունեցող անձին:

ՆՇՈԻՄ. ուղեկցող կենդանուն կարող է վարժեցնել մասնագետը, ընկերը, ընտանիքի անդամը կամ հաշմանդամություն ունեցող անձը:

ՆՇՈԻՄ. ուղեկցող կենդանին կարող է լինել նաև փոքրիկ ձի: Չնայած ADA-ի սահմանումը սահմանափակվում է շներով, սակայն դաշնային իրավական ակտերը սահմանում են, որ հանրային վայրերում փոքրիկ ձիերի օգտագործումը որպես ուղեկցող կենդանի պետք է թույլատրվի, եթե դրանք անհատականորեն վարժեցվել են հաշմանդամություն ունեցող անձին օգնելու նպատակով, և եթե կա նրանց կապելու ողջամիտ տեղ:

## **Ո՞րն է համարվում զգացական աջակցության կենդանի**

Չգացական աջակցության կենդանի է.

1. ցանկացած կենդանի,
2. որը թեթևացնում է
3. անձի հաշմանդամության հետևանքները`
4. տալով հարմարավետության զգացում կամ ցուցաբերելով աջակցություն:

**Ախատանքի կամ առաջադրանքների ի՞նչպիսի օրինակներ կան, որոնց կատարման համար կարելի է վարժեցնել ուղեկցող կենդանիներին**

Լույսերը միացնելը, առարկաները վերցնելը, կենդանավարի թերապիան շոշափողական խթանման և խորը սեղմման միջոցով, իմպուլսիվ կամ կործանիչ վարքագծի կանխարգելումը կամ ընդհատումը, դեղորայքի ընդունման հիշեցումը և մոլորված անձին վտանգավոր իրավիճակից հանելը:

ՆՇՈԲՄ. Որևէ հատուկ իրավական պահանջ այն հարցի վերաբերյալ, թե ուղեկցող կենդանին ինչ քանակի և տեսակի աշխատանք պետք է կատարի հաշմանդամություն ունեցող անձին օգուտ տալու համար, գոյություն չունի: Ուղեկցող կենդանի լինելու միակ պահանջն այն է, որ շունը պետք է լինի անհատականորեն վարժեցված, որպեսզի օգուտ տա հաշմանդամություն ունեցող անձին:

**Արդյո՞ք պետք է որևէ բան անեմ, որպեսզի շանս ճանաչեն որպես ուղեկցող կենդանի**

ՈՉ: ADA-ով չի պահանջվում, որպեսզի ուղեկցող շները գրանցվեն որպես ուղեկցող կենդանի կամ կրեն հատուկ պիտակ կամ բաճկոն որպես ուղեկցող կենդանիներ ճանաչվելու համար: Կալիֆորնիայի օրենսդրությամբ պահանջվում է, որ կենդանիների վերահսկողության տեղական դեպարտամենտները տպեն նույնականացման պիտակներ այն մարդկանց համար, որոնք օգտագործում են ուղեկցող կենդանիներ և վարժեցնում են նրանց: Ինչևէ, քանի դեռ շունը որպես ուղեկցող կենդանի դեռ վարժեցվում է (տե՛ս քննարկումը ստորև), պիտակները պարտադիր չեն և չեն սահմանում, որ կենդանին օրինական ուղեկցող կենդանի է:

## **Ի՞նչ իրավունքներ ունեմ, երբ պատրաստվում եմ իմ ուղեկցող կենդանուն ինձ հետ հանրային վայրեր տանել**

ADA օրենքի Չատվածներ II-ը և III-ը սահմանում են, որ թույլատրվում է, որպեսզի ուղեկցող կենդանիներն իրենց տերերին ուղեկցեն հանրային վայրերում («հանրային վայրի» բացատրությունը տե՛ս ներքևի հարցերում), եթե ոչ մի բացառություն չի գործում (տե՛ս «Ո՞ր դեպքերում ինձ ուղեկցող կենդանուն կմերժեն մուտք գործել հանրային վայր» բաժինը ստորև):

### **Ո՞րն է համարվում հանրային վայր**

Հանրային վայր են համարվում բիզնեսը կամ պետական կազմակերպությունը, որոնք բաց են հանրության համար:

Բիզնեսներ են ռեստորանները, հյուրանոցները, կինոթատրոնները, խանութները, բժշկական հաստատությունները և հիվանդանոցները:

Պետական կազմակերպություններ են այն վայրերը, որոնց գործունեությունն իրականացնում է նահանգային կամ տեղական կառավարման մարմինը, դրանք են, օրինակ, պետական շենքերը, հասարակական տրանսպորտը և հանրային զբոսայգիները:

ՆՇՈԲՄ. պետական կազմակերպություններ կարող են լինել նաև անօթևանների կացարանները, որոնց գործունեությունն իրականացնում է տեղական կառավարման մարմինը:

ՆՇՈԲՄ. հանրային վայրեր կարող են լինել նաև անօթևանների կացարանների ցերեկային խնամքի սենյակները, գրադարանները, սննդի կետերը և տարեցների խնամքի կենտրոնները, քանի որ դրանք ազատ հասանելի են հանրության համար:

### **Ի՞նչ պետք է անեմ, երբ ինձ ուղեկցող կենդանու հետ փորձում եմ մուտք գործել հանրային վայր/ի՞նչ հարցեր կարող են ուղղել ինձ**

Եթե ունեք ուղեկցող կենդանի, օրենքը պաշտպանում է այդ կենդանու հետ հանրային վայր մուտք գործելու ձեր իրավունքը: Հետևաբար, միակ բանը, որ անհրաժեշտ է անել, հանրային վայր մուտք գործելն է: Բացի

այդ, եթե կենդանի ունենալու կարիքն ակնհայտ է կամ կասկած չի հարուցում, ձեզ հարցեր չեն կարող տալ:

Սակայն եթե հանրային վայրի աշխատակիցը կամ ներկայացուցիչը վստահ չլինի, որ ձեր կենդանին ուղեկցող կենդանի է, նրանք գուցե ձեզ՝ կենդանավարին, հարցնեն հետևյալը.

- 1) Արդյո՞ք կենդանու ներկայությունը պարտադիր է կենդանավարի հաշմանդամության պատճառով, և
- 2) Կենդանին ինչպիսի՞ աշխատանքի կամ առաջադրանք կատարելու համար է վարժեցվել:

ՆՇՈՒՄ. Կալիֆորնիայի օրենսդրությամբ շանը որպես վարժեցված ուղեկցող կենդանի սուտ ներկայացնելը համարվում է օրենքի խախտում, որի համար որպես պատիժ սահմանվում է մինչև վեց ամսվա ազատազրկում և (կամ) մինչև 1000 ԱՄՆ դոլարի տույժ (Քրեական օրենսգրքի Բաժին 365.7(a)):

### **Ո՞ր դեպքերում ինձ ուղեկցող կենդանուն կմերժեն մուտք գործել հանրային տարածքներ**

Չանրային տարածքներում պարտավոր չեն թույլատրել այն ուղեկցող կենդանիների մուտքը, որոնք.

1. անմիջական վտանգ են ներկայացնում ուրիշների համար,
2. կենդանավարի խնամքի կամ հսկողության տակ չեն կամ
3. հիմնովին կձևափոխեն բիզնեսի կամ պետական կառույցի կողմից տրամադրվող ապրանքների, ծառայությունների կամ ծրագրերի բնույթը:

### **Ի՞նչն է համարվում անմիջական վտանգ**

Անմիջական վտանգ է.

1. զգալի ռիսկը ուրիշների առողջության կամ անվտանգության համար,
2. որը հնարավոր չէ վերացնել քաղաքականությունների, գործելակերպերի կամ ընթացակարգերի փոփոխմամբ կամ օժանդակ միջոցների կամ ծառայությունների տրամադրմամբ:

Օրինակ՝ առանց դրդապատճառի կծող շունը կարող է անմիջական վտանգ ներկայացնել:

ՆՇՈՒՄ. Ուղեկցող կենդանուն անմիջական վտանգի հիմքով արգելելը պետք է հիմնված լինի տվյալ կենդանու փաստացի վարքագծի, այլ ոչ այն ենթադրությունների կամ կարծրատիպերի վրա, թե կենդանին կամ կենդանու ցեղատեսակները հնչալես կարող էին պահել իրենց:

ԵՎ, անմիջական վտանգի առկայությունը որոշելիս պետք է կատարել անհատականացված գնահատում՝ առաջնորդվելով այն ողջամիտ դատողությամբ, որի հիմքում ընկած է նոր բժշկական տեղեկանքը կամ առկա լավագույն օբյեկտիվ ապացույցը: Գնահատմամբ պետք է որոշվի. ռիսկի բնույթը, տևողությունը և լրջությունը, պոտենցիալ վնասվածքի փաստացիորեն առաջացման հավանականությունը և արդյոք քաղաքականությունների, գործելակերպերի կամ ընթացակարգերի ողջամիտ փոփոխությունները կամ օժանդակ միջոցների կամ ծառայությունների տրամադրումը կնվազեցնեն ռիսկը:

### **Ի՞նչ կարող է տեղի ունենալ, եթե ինձ ուղեկցող կենդանին իմ ինամբի և հսկողության տակ չէ**

Հաշմանդամություն ունեցող անձին կարող են ինդրել տարածքից հեռացնել իրեն ուղեկցող կենդանուն, եթե կենդանին հսկողության տակ չէ, և կենդանավարը կենդանուն հսկելու արդյունավետ միջոցներ չի ձեռնարկում, կամ եթե կենդանին ընտելացված չէ: Ուղեկցող կենդանու հսկողության և ինամբի պատասխանատվությունը չեն կրում տվյալ տարածք մուտք գործելու թույլտվություն տվող բիզնեսը կամ պետական կազմակերպությունը:

Ընդհանուր առմամբ, ուղեկցող կենդանին պետք է ունենա լծասարք, վզափոկ կամ կապելու այլ հարմարանք: Ինչևէ, եթե կենդանավարը հաշմանդամության պատճառով չի կարող լծասարք, վզափոկ կամ այլ տեսակի պարան օգտագործել, կամ եթե պարանը կիսանգարի ուղեկցող կենդանու անվտանգությանը, աշխատանքի կամ առաջադրանքների արդյունավետ կատարմանը, կենդանավարը կարող է կենդանուն հսկողության տակ պահելու այլ միջոցներ օգտագործել:

### **Ի՞նչ է նշանակում «հիմնովին ձևափոխել որևէ տարածքում առաջարկվող ապրանքների, ծառայությունների կամ ծրագրերի բնույթը»**



Օրինակ՝ եթե անօթևանների կացարանի ցերեկային հանգստի սենյակի աշխատակցին խնդրեք կերակրել ուղեկցող կենդանուն, քայլել նրա հետ կամ մաքրել նրա հետևից, դա կարող է համարվել անօթևանների կացարանի անձնակազմի անդամի կողմից մատուցվող ծառայության ձևափոխում:

### **Կարո՞ղ եմ ինձ ուղեկցող կենդանուն ինձ հետ բերել հիվանդանոց կամ բուժհաստատություններ**

ԱՅՈ: Հիվանդանոցները և այլ բուժհաստատությունները դիտվում են որպես այլ բիզնեսներ և հանրային վայրեր, որոնց նպատակի մեջ մտնում է ուղեկցող կենդանու մուտքը թույլ տալը: Ուղեկցող կենդանիները պետք է ունենան հիվանդանոցի բոլոր այն հատվածների մուտքի թույլտվություն, որտեղ իրավունք ունեն մտնել հիվանդանոցի անձնակազմը, բուժառուները և այցելուները: Դրանք են հիվանդասենյակները և հոգեկան առողջության ամբուլատոր և ստացիոնար բաժանմունքների այլ հանրային տարածքները, այդ թվում՝ հոգեկան առողջության փակ հաստատությունները: Բուժառուները պետք է կարողանան ինսամել կենդանուն կամ անհրաժեշտության դեպքում պետք է կազմակերպեն կենդանու ինսամբը մեկ ուրիշի կողմից:

Այնուամենայնիվ, ուղեկցող կենդանիներին գուցե արգելվի մուտք գործել հիվանդանոցների սահմանափակ մուտքով այն տարածքները, որտեղ իրականացվում են հակավարակային միջոցառումներ, այդպիսիք են վիրահատարանները կամ այրվածքաբանական բաժանմունքները: Այլ բիզնեսների և պետական կազմակերպությունների նման, երբ բուժաշխատողները վստահ չինեն, որ կենդանին ուղեկցող կենդանի է, նրանք գուցե հարցնեն կենդանավարին, թե արդյոք այն ուղեկցող կենդանի է, որի անհրաժեշտությունը կա հաշմանդամության պատճառով, և ինչ ծառայություն է կատարում այդ կենդանին, սակայն հնարավոր է, որ նրանք ուղեկցող կենդանու կարգավիճակը հաստատող վկայագիր կամ այլ փաստաթուղթ չպահանջեն:

### **Ինձնից կարո՞ղ են պահանջել վճարել երաշխիքային վճար հյուրանոցում ինձ ուղեկցող կենդանու հետ մնալու համար**

ՈՉ: Բիզնեսը կամ պետական կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձից չեն կարող պահանջել վճարել երաշխիքային վճար կամ հավելավճար, որպեսզի ուղեկցող կենդանին ուղեկցի նրան, նույնիսկ եթե դա սահմանված է կենդանիներով այցերի նրանց

քաղաքականությամբ: Սակայն եթե հասարակական վայրի կամ պետական կազմակերպության սահմանված կարգով նախատեսվում է գումար գանձել հյուրերից տարածքին, օրինակ, հյուրանոցային սենյակին հասցված վնասի համար, ապա ուղեկցող կենդանու տիրոջից նրանք հնարավոր է գումար գանձեն նման վնասի համար:

### **Ի՞նչ իրավունքներ ունեմ, երբ շանս վարժեցնում եմ, որ դառնա ուղեկցող կենդանի**

Չամաձայն Կալիֆորնիայի քաղաքացիական իրավունքների մասին Ունրուի օրենքի (Քաղաքացիական օրենսգրքի Բաժին 54.1) և Չաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքի (Քաղաքացիական օրենսգրքի Բաժին 54.2) հաշմանդամություն ունեցող անձանց թույլատրվում է իրենց շներին բերել վարձակալած բնակության վայր և այլ կոմերցիոն տարածքներ՝ նրանց որպես ուղեկցող շներ վարժեցնելու համար:

Շները պետք է կրեն վարչաշրջանի կողմից տրված պիտակ, որով նրանք կճանաչվեն որպես վարժեցվող ուղեկցող շուն և պետք է կապված լինեն վզափոկով: Եթե վարչաշրջանի կողմից տրված պիտակն առկա չլինի, վարժեցվող ուղեկցող շունը, այնուամենայնիվ, կարող է դիտվել որպես ողջամիտ հարմարություն:

### **Եթե ունեմ ոչ թե ուղեկցող, այլ զգացական աջակցության կենդանի, արդյո՞ք հանրային տարածքներին առնչվող նույն կանոնները կիրառելի են**

ՈՉ, ADA-ը սահմանում է, որ հանրային տարածքներում իրենց կենդանավարին ուղեկցել թույլատրվում է միայն ուղեկցող կենդանիներին և ոչ զգացական աջակցության կենդանիներին, և չկան նահանգային կամ դաշնային օրենքներ, որոնք թույլատրում են զգացական աջակցության կենդանիների հանրային տարածքներում գտնվելը:

### **Որո՞նք են օգնական կենդանու հետ բնակության վայր մուտք գործելու իմ իրավունքները**

Չաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենքում ուղեկցող կենդանիները և զգացական աջակցության կենդանիները բնակության վայրերի համատեքստում միասին ձևակերպվում են որպես «օգնական կենդանիներ»:

Ուղեկցող կենդանիների հետ բնակության վայր, այդ թվում՝ անօթևանների կացարաններ, մուտք գործելը համարվում է նույնը, ինչ հանրային տարածքներ մուտք գործելը (տե՛ս «Ի՞նչ պետք է անեմ, երբ ինձ ուղեկցող կենդանու հետ փորձում եմ մուտք գործել հանրային տարածք/ի՞նչ հարցեր կարող են ուղղել ինձ» և «Ո՞ր դեպքերում ինձ ուղեկցող կենդանուն կմերժեն մուտք գործել հանրային տարածք» հարցերը վերևում):

Չգացական աջակցության կենդանիների հետ բնակության վայր մուտք գործելը, այդ թվում՝ անօթևանների կացարաններ մուտք գործելը թույլատրվում է որպես ողջամիտ հարմարություն, եթե տանտերը, համատիրությունը կամ անօթևանների կացարանը կիրառում են կենդանիների արգելման քաղաքականություն: Ողջամիտ հարմարության դիտարկման գործընթացը ենթադրում է հաշմանդամության հետ կապված կարիքի ավելի խորը հարցում, քան ուղեկցող կենդանու հետ մուտք գործելու դեպքում: Մանրամասն բացատրությունը տե՛ս ստորև քննակված հարցերում:

### **Ի՞նչ է ողջամիտ հարմարությունը**

Ողջամիտ հարմարությունները այն կանոնների կամ քաղաքականությունների բացառություններն են, որոնք անհրաժեշտ են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրենց բնակավայրն օգտագործելու և վայելելու հավասար հնարավորություն ընձեռելու համար: Ողջամիտ հարմարություն տրամադրելու պարտավորությունը ներառում է այն պահանջը, որ բնակության վայր տրամադրողները պետք է բացառություններ սահմանեն «առանց տնային կենդանիների» քաղաքականությունում՝ թույլ տալու հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործել իրենց զգացական աջակցության կենդանուն և ապրել նրա հետ:

Կալիֆորնիայի և դաշնային օրենսդրությամբ զգացական աջակցության կենդանիները պետք է թույլատրվեն բնակության վայրերում որպես վարձակալի հաշմանդամության ողջամիտ հարմարություն:

**Իմ օգնական կենդանին պե՞տք է ունենա վկայագիր՝ առանց կենդանիների քաղաքականության դեպքում որպես ողջամիտ հարմարություն դիտարկվելու համար**

ՈԶ: Օգնական կենդանուն բնակության վայրում որպես ողջամիտ հարմարություն թույլատրելու համար չի պահանջվում, որ այն լինի հատուկ վարժեցված կամ ունենա վկայագիր: Անձի հաշմանդամության և կենդանու տրամադրած ծառայության, հարմարության կամ ուղեկցության միջև պետք է կապ լինի:

ՆՇՈԻՄ. ցանկացած տեսակի կենդանի կարող է օգնական կենդանի լինել, եթե այն թեթևացնում է կենդանավարի հաշմանդամության ախտանշանները:

**Ո՞ր դեպքում կարող է մերժվել իմ զգացական աջակցության կենդանուն ողջամիտ հարմարության նպատակով ինձ հետ իմ բնակության վայրում ունենալու դիմումը**

Եթե կենդանին.

1. անհրաժեշտ չէ կենդանավարի հաշմանդամության պատճառով,
2. անմիջական վտանգ է ներկայացնում այլ մարդկանց կամ սեփականության համար,
3. կենդանավարի ինսամքի կամ հսկողության տակ չէ կամ ընտելացված չէ,
4. անտեղի ֆինանսական կամ վարչական բեռ է ներկայացնում կամ
5. հիմնովին փոխում է այն ծառայությունների բնույթը, որոնք տրամադրում են տանտերը կամ համատիրությունը:

ՆՇՈԻՄ. հիշեք, որ անմիջական վտանգը պետք է որոշվի կենդանու վարքագծի անհատական գնահատմամբ, այլ ոչ կենդանու ցեղատեսակների կարծրատիպերի հիման վրա:

ՆՇՈԻՄ. Կենդանավարները պետք է նաև ապահովեն, որ իրենց օգնական կենդանին բավարարի կենդանիների հսկողության վերաբերյալ նահանգային և տեղական օրենքների պահանջները և վտանգ չներկայացնի կամ անհարմարություն չպատճառի համայնքին: Դա վերաբերում է նաև վերջին պատվաստումներին (տե՛ս Կալիֆորնիայի Պարենի և գյուղատնտեսության մասին օրենսգրքի § 30851-ը):

**Որո՞նք են տանտիրոջ, համատիրության կամ անօթևանների կացարանի տրամադրած ծառայությունների բնույթի հիմնովին ձևափոխման օրինակները**

Եթե բնակության վայր տրամադրողին խնդրեք կերակրել օգնական կենդանուն, քայլել նրա հետ կամ մաքրել նրա հետևից, դա կարող է համարվել տանտիրոջ կամ անօթևանների կացարանի անձնակազմի անդամի կողմից մատուցվող ծառայության ձևափոխում:

### **Ինչպե՞ս եմ դիմում կենդանուն որպես ողջամիտ հարմարություն դիտարկելու համար**

Կարող եք դիմել բանավոր կամ գրավոր (տե՛ս նամակի նմուշը ստորև):

### **Ողջամիտ հարմարությունը որպես առանց կենդանիների քաղաքականության բացառություն ընդունելու համար դիմելիս ի՞նչ հարցեր կարող է ինձ տալ իմ բնակության վայր տրամադրողը**

Եթե ցանկանում եք բնակության վայրում ձեզ հետ ունենալ օգնական կենդանուն որպես ողջամիտ հարմարություն, բնակության վայրի տերը, համատիրությունը կամ կացարանի կառավարիչը կարող են.

1. խնդրել տրամադրել փաստաթուղթ, որը կհաստատի ձեր հաշմանդամությունը և
2. այն, թե արդյոք ունեք կենդանու կարիք, որը պայմանավորված է ձեր հաշմանդամությամբ:

ՆՇՈՒՄ. բնակության վայր տրամադրողը չպետք է պահանջի փաստաթուղթ այն մասին, թե արդյոք ձեր հաշմանդամությունը և հաշմանդամությամբ պայմանավորված՝ ուղեկցող կամ աջակցող կենդանու ձեր կարիքն ակնառու են:

Բնակության վայր տրամադրողը կարող է պահանջել տեղեկություն վստահելի երրորդ անձից, օրինակ, բուժող մասնագետից, որը կհաստատի օգնական կենդանուն որպես ողջամիտ հարմարություն ունենալու կարիքը: Պահանջը պետք է սահմանափակվի այն տեղեկությամբ, որն անհրաժեշտ է հաշմանդամությամբ պայմանավորված կարիքը սահմանելու համար:

Բնակության վայր տրամադրողը չի կարող բնակության վայրի վարձակալման դիմումատուին կամ վարձակալին խնդրել ապահովել մուտք բժշկական տվյալներին կամ կապ բուժհաստատությունների հետ կամ տրամադրել մանրամասն կամ ծավալուն տեղեկություն կամ

վաստաթղթեր անձի ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության վերաբերյալ:

\*Օգնական կենդանի ունենալու դիմումի և աջակցող նամակների նմուշները ներկայացված են ստորև:

### **Կարո՞ղ եմ ինձնից վճար պահանջել իմ օգնական կենդանուն ինձ մոտ պահելու համար**

ՈՉ: Բնակության վայր տրամադրողը չի կարող վարձակալման դիմումատուից կամ վարձակալից պահանջել վճարել վճար կամ երաշխիքային գումար կամ ձեռք բերել ապահովագրություն կենդանու համար, ինչը անձին իր օգնական կենդանուն իր մոտ պահելու թույլատվության պայման կհամարվի: Սակայն բնակության վայր տրամադրողը կարող է անձից գումար գանձել կենդանու կողմից բնակարանին կամ ընդհանուր օգտագործման տարածքներին պատճառած ցանկացած վնասի վերանորոգման համար:

### **Ինչպե՞ս բողոք ներկայացնեմ, եթե կարծում եմ, որ պետական կազմակերպության կամ հանրային վայրի կողմից իմ նկատմամբ խտրականություն է կիրառվել**

Եթե կարծում եք, որ մասնավոր կամ պետական որևէ կազմակերպության կողմից ձեր նկատմամբ սխալմամբ խտրականություն է կիրառվել ձեր ուղեկցող կենդանու պատճառով, կարող եք բողոք ներկայացնել Արդարադատության դեպարտամենտին (անգլ. Department of Justice, DOJ): Եթե բողոքը դաշնային ֆինանսավորում ստացող պետական կամ մասնավոր կազմակերպության դեմ է, ապա բողոքը պետք է ստացվի խտրականության դեպքը տեղի ունենալուց (խնդիրն առաջանալուց) հետո 180 օրվա ընթացքում: ADA օրենքի համաձայն դաշնային ֆինանսավորում չստացող մասնավոր ընկերության դեմ բողոք ներկայացնելու վերջնաժամկետ չկա, սակայն լավ կլինի բողոքը ներկայացնել հնարավորինս շուտ: Արդարադատության դեպարտամենտին բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել [https://www.ada.gov/filing\\_complaint.htm](https://www.ada.gov/filing_complaint.htm) հղումով կամ ADA-ի տեղեկատվական հեռախոսահամարով՝ (800) 514-0301 (ձայնային զանգ), (800) 514-0383 (հեռատիպ):

Կալիֆորնիայի օրենսդրության համաձայն Կալիֆորնիայի Աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականության արգելման դեպարտամենտին (անգլ. Department of Fair Employment and Housing, DFEH) կարող եք հաշմանդամության հիմքով խտրականության համար նաև վարչական բողոք ներկայացնել հանրային վայրի, պետական կազմակերպության կամ բնակության վայր տրամադրողի (այդ թվում՝ անօթևանների կացարանի) դեմ՝ վերջին խտրականության օրվանից հետո մեկ տարվա ընթացքում: DFEH-ին բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել <https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/> հղումով կամ զանգահարելով՝ (800) 884-1684 (ձայնային զանգ) կամ (800) 700-2320 (հեռատիպ):

Լրացուցիչ կամ DOJ-ին կամ DFEH-ին բողոք ներկայացնելուց բացի կարող եք հայցով դիմել նահանգային կամ դաշնային դատարան դաշնային կամ նահանգային օրենսդրությամբ սահմանված կարգով ինյունկտիվ և դեկլարատորային պաշտպանության համար: Նահանգային օրենսդրությամբ կարող են վնասի դրամական փոխհատուցումներ լինել, ընդ որում կարող է սահմանվել 4000 ԱՄՆ դոլար նվազագույն փոխհատուցում խտրականության մեկ դեպքի համար: Քաղաքացիական օրենսգիրք, §52: Դատական հայցերը պետք է ներկայացվեն խտրականության դեպքից հետո երկու տարվա ընթացքում:

Եթե նպատակ ունեք ստանալ վնասի դրամական փոխհատուցում մինչև 10 000 ԱՄՆ դոլարի չափով, ապա մեկ այլ տարբերակ է խտրականության դեպքի համար փոքր հայցերով զբաղվող դատարանին բողոք ներկայացնելը: Այս դեպքում ևս կգործեն վերևում քննարկված վաղեմության ժամկետները: Փոքր հայցերով զբաղվող դատարանին դիմելիս չեք կարող փաստաբան վարձել: [Այս հղումը](#) Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության այն հրապարակման հղումն է, որում բացատրվում է խտրականության դեպքերի համար փոքր հայցերով զբաղվող դատարանին դիմելու կարգը:

Բացի այդ, Կառավարության դեմ քաղաքացիական իրավախախտումների բողոքների մասին օրենքը պահանջում է, որ քաղաքացիական իրավախախտումների բողոքները ներկայացվեն խտրականության դեպքից հետո վեց ամսվա ընթացքում՝ նախքան նահանգային կամ տեղական կառավարման մարմնի դեմ վնասի դրամական փոխհատուցման պահանջով դատական հայց

ներկայացնելը: Քաղաքացիական իրավախախտումների բողոքների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել [այս հղումով](#): Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս կայքը պարունակում է նահանգի կամ նահանգային գործակալության կամ աշխատակցի դեմ բողոքների ձևերի հղումները, որոնք գուցե ձեր գործի հետ առնչություն չունենան: Պետական այլ մարմինները գուցե ունենան քաղաքացիական իրավախախտումների բողոքների իրենց սեփական ձևերը, որոնք կարելի է գտնել իրենց կայքերում: Եթե հետաքրքրված եք դատական հետաքննությամբ, պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

**Ինչպե՞ս բողոք ներկայացնեմ, եթե կարծում եմ, որ բնակության վայր տրամադրողն իմ նկատմամբ խտրականություն է կիրառել**

Եթե տանտերը, կոնդոմինիումի համատիրությունը կամ այլ կացարան տրամադրողը հրաժարվում է թույլ տալ ձեր օգնական կենդանուն որպես ողջամիտ հարմարություն, կարող եք հայց կամ վարչական բողոք ներկայացնել:

Կարող եք վարչական բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականության արգելման վարչությանը (DFEH) խտրականության ամենավերջին դեպքի օրվանից հետո մեկ տարվա ընթացքում: DFEH-ին բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել <https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/> հղումով կամ զանգահարելով (800) 884-1684 հեռախոսահամարով (ձայնային զանգ) կամ (800) 700-2320 հեռատիպով:

Առանց խտրականության կացարանով ապահովման պայմաններում փոփոխությունների մասին օրենքի համաձայն կարող եք վարչական բողոք ներկայացնել ԱՄՆ Բնակարանաշինության և քաղաքաշինության դեպարտամենտին (անգլ. Department of Housing and Urban Development, HUD)՝ կրկին խտրականության դեպքից հետո մեկ տարվա ընթացքում: HUD-ին բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ 1-800-669-9777 հեռախոսահամարով կամ հետևյալ հղումով՝ [https://portal.hud.gov/hudportal/HUD?src=/topics/housing\\_discrimination](https://portal.hud.gov/hudportal/HUD?src=/topics/housing_discrimination):

Վերևում նշված օրենքների խախտումները կարող են քննվել նաև մասնավոր դատական հայցերի միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ



գործում են վաղեմության ժամկետներ, որոնք սահմանափակում են դատական քննության համար հայցի ներկայացման ժամկետները, և հավանական է՝ կորցնեք հայց ներկայացնելու հնարավորությունը, եթե չդիմեք գործող վաղեմության ժամկետների ընթացքում: Այդ վերջնաժամկետները կարող են լինել մինչև երկու տարի՝ սկսած խտրականության կիրառման օրվանից: Եթե հետաքրքրված եք դատական հետաքննությամբ, պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

Եթե նպատակ ունեք ստանալ վնասի դրամական փոխհատուցում մինչև 10 000 ԱՄՆ դոլարի չափով, ապա մեկ այլ տարբերակ է խտրականության դեպքի համար փոքր հայցերով զբաղվող դատարանին բողոք ներկայացնելը: Այս դեպքում ևս կգործեն վերևում քննարկված վաղեմության ժամկետները: Փոքր հայցերով զբաղվող դատարանին դիմելիս չեք կարող փաստաբան վարձել: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս. Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպություն, «Ուղեցույց փոքր հայցերով զբաղվող դատարանի վերաբերյալ. ինչպես հայցով դիմել դատարան, եթե բիզնեսը կամ տանտերը խտրականություն է կիրառում Ձեր նկատմամբ Ձեր հաշմանդամության հիմքով», հղում՝ <https://www.disabilityrightsca.org/publications/a-guide-to-small-claims-court-how-to-sue-if-a-business-or-landlord-discriminates>:

### **Նամակ բնակության վայր տրամադրողին՝ օգնական կենդանուն թույլ տալու խնդրանքով (նմուշ)**

[Ամսաթիվ]

Հարգելի [տանտեր, բնակության վայրի ղեկավար մարմին, համատիրություն, անօթևանների կացարանի անվանումը]

Գրում եմ Ձեզ օգնական կենդանուն որպես իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար ողջամիտ հարմարություն դիտարկելու խնդրանքով:

Ես ապրում եմ/դիմում եմ վարձակալելու [հասցե] հասցեում գտնվող Ձեր սեփականությունում/կացարանում: Իմ հաշմանդամության պատճառով ինձ անհրաժեշտ է պահել օգնական կենդանի որպես ողջամիտ հարմարություն:

Իմ բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/մասնագիտական հիվանդությունների բժիշկը/այլ անձը [նկարագրել] այս հարմարությունը համարել է անհրաժեշտ՝ ելնելով իմ հաշմանդամությունից: Կից ներկայացնում եմ [բժշկի կամ մասնագետի անունը]-ի նամակը:

Դաշնային և նահանգային օրենսդրությամբ պահանջվում է, որ բնակության վայր տրամադրողը հաշմանդամություն ունեցող վարձակալներին/բնակիչներին և վարձակալման դիմումատուներին տրամադրի ողջամիտ հարմարություն: Խնդրում եմ պատասխանել այս դիմումին մինչև՝ [ամսաթիվ]: Հարցեր ունենալու դեպքում ինձ հետ կարող եք կապվել հետևյալ կերպ՝ [սչեք ձեր հեռախոսահամարը և/կամ էլ. փոստի հասցեն]: Շնորհակալություն:

Հարգանքով,

[Ձեր անունը]

[Ձեր հասցեն]

### **Տեղեկանք (նմուշ)**

[Ամսաթիվ]

Ում՝ [տանտեր, բնակության վայրի ղեկավար մարմին, համատիրություն, անօթևանների կացարանի անվանումը].

Ես հանդիսանում եմ [Ձեր անունը, ազգանունը]-ի բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/մասնագիտական հիվանդությունների բժիշկը և ծանոթ եմ նրա առողջական վիճակին: Նա ունի այնպիսի հաշմանդամություն, որը որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ է պատճառում: Այդ սահմանափակումներն են՝ [թվարկել ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնց համար պահանջվում է դիմումի մեջ նշված հարմարությունը]:

Համայնքում ապրելու և իր բնակության վայրից օգտվելու ու այն վայելելու համար \_\_\_\_\_-ին անհրաժեշտ է օգնական կենդանի, որը նրան կօգնի հետևյալում՝ [նկարագրեք, թե ինչպես է կենդանին օգնելու կամ աջակցելու տվյալ անձին]:

Շնորհակալություն [անուն, ազգանուն]-ին այս ողջամիտ  
հարմարությունը տրամադրելու համար:

Չարգանքով՝

[անուն, ազգանուն և պաշտոն]

**Կապ Կալիֆորնիայի Չաշմանդամություն ունեցող անձանց  
իրավունքների պաշտպանության կազմակերպության հետ**

Եթե ունեք այլ հարցեր, ինչպես նաև իրավական բնույթի օգնության  
կարիք, զանգահարեք **Կալիֆորնիայի Չաշմանդամություն ունեցող  
անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությանը**  
800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացրեք [օգնության դիմումի  
ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Չյուսիսային  
Կալիֆորնիա) և 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա)  
հեռախոսահամարներով: